

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/3

1 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Արայ» ՍՊԸ 02.06.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 04.04.2014 թ-ի թիվ 0095 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Արայ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից Հանձնաժողովին ներկայացվել է 02.06.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 04.04.2014 թ-ի թիվ 0095 որոշման դեմ:

Այնուհետև, հիմք ընդունելով ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 30.06.2014 թ-ի որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ որոշմամբ ամրագրված 2014 թ-ի 1-ին եռամսյակի շահութահարկի հաշվարկի կանխավճարի նկատմամբ հաշվարկված տույժը (32.446 դրամ) «Արայ» ՍՊԸ կողմից վճարվել է, ընկերությունը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովին հասցեագրված 30.06.2014 թ-ի դիմումով խնդրել է «Արայ» ՍՊԸ 02.06.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Հիմք ընդունելով «Արայ» ՍՊԸ 30.06.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Արայ» ՍՊԸ 02.06.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահի Ժ/ա



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ